

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА



ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԵՎ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐԵՐՈՒՄ ԱՍՈՒՄՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՁԵՎԱԽՄԱՍՏԱՑԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ *

ՀՏԴ 81՝ 37

DOI: 10.52063/25792652-2024.1.20-109

ԱՆՆԱ ՂԱՐՍԼՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

annagharslyan@gmail.com

ORCID: 0000-0003-4053-3736

Հոդվածի նպատակն է ներկայացնել միջնադարյան 2 հանճարեղ իրավագետների՝ Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի ամուսնաընտանեկան և ժառանգական քաղաքացիական հարաբերություններ կարգավորող օրենքների և կանոնների իրավական բառապաշարի ձևախմաստային առանձնահատկությունները, որոնց իմացությունը ապահովում է արդի հայերենում իրավական խոսքի հաստատուն և ճշգրիտ շարադրանքը բովանդակային և լեզվական տեսանկյունից:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ լեզվական քննության ենթարկել միջնադարյան իրավագետների դատաստանագրքերը, ընդգծել ուսումնասիրվող նյութի բառապաշարի ձևախմաստային դրսևորումները, ներկայացնել դրանց զարգացումը, համեմատել ներկայիս համապատասխան օրենսգրքերի մասնագիտական բառապաշարի հետ, տարբերակել հնաբառերը, պատմաբառերը, ինչպես նաև արդի հայերենի կենսունակ իրավաբանական տերմինները:

Հոդվածի նյութը ներկայացված է լեզվաբանության մեջ մշակված իմաստաբանական, համեմատական, վերլուծական և նկարագրական մեթոդներով, տարաժամանակյա և համաժամանակյա մոտեցումներով:

Կատարված ուսումնասիրությունից եզրահանգում ենք, որ միջնադարում հայ իրականության մեջ ձևավորվել են օրենքներով և կանոններով կարգավորվող ամուսնաընտանեկան և ժառանգական քաղաքացիական հարաբերություններ, որոնց վերաբերյալ իրավանորմերը դատաստանագրքերում շարադրված են մասնագիտական համապատասխան բառապաշարով: Թեև դրանց մի սովոր մասն այսօր տերմինային արժեք չունի, բայց և այնպես մի զգալի մասն էլ կարևոր դերակատարություն է ունեցել արդի հայերենի իրավական բառապաշարի բառամիջուկը կազմելիս:

* Հոդվածը ներկայացվել է 19.01.2024թ., գրախոսվել՝ 03.02.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2024թ.:

Ակներն են գրական հայերենի 2 որակների ընդհանրական և տարբերակիչ մասնագիտական բառաշերտերը, որոնք պայմանավորված են օրենսգետների օգտագործած իրավական աղբյուրներով, նրանց կրթությամբ, հասարակական կյանքում զբաղեցրած պաշտոնով, տարբեր ժամանակահատվածներում ստեղծագործելու լեզվական, հասարակական-քաղաքական տարաբնույթ պահանջներով:

Հիմնաբառեր՝ տերմին, ամուսնաընտանեկան հարաբերություններ, ժառանգական իրավունք, դատաստանագիրք, ազգային սովորույթներ, գրաքար, միջին հայերեն, հոմանիշային շարք, ապահարգան, կտակ:

Նախաբան

Հայ իրավական գրականությունը մինչև 12-րդ դարը չի ունեցել հասարակության բոլոր ոլորտներին վերաբերող և դրանք կարգավորող ընդհանուր հայկական օրենսգիրք՝ կազմված աշխարհիկ և հոգևոր օրենքներով:

Երբ հայ իրավական միտքը առավել ակտիվ զարգացավ միջնադարում, համընդհանուր օրենքների ժողովածու ստեղծելու առաջին փորձը կատարեց վարդապետ Դավիթ Ալավկաորդին իր «Կանոնագիրք» աշխատությամբ, որը, սակայն, պետական իշխանությունը չվավերացրեց:

Այդ ժամանակներից մեզ հասած օրենքների ամբողջական և արժեքավոր ժողովածուներ են Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի»-ն, որը հեղինակը ձեռնարկել է գրել 1184 թվականին, և Սմբատ Սպարապետի՝ 1265 թվականին կազմած «Դատաստանագիրքը»:

Հասարակական բոլոր ոլորտները կարգավորող օրենքների առավել ամբողջական և պետության կողմից կիրառություն ստացած օրենսգիրք է Մխիթար Գոշի դատաստանագիրքը, որը կիրառել են հոգևոր և աշխարհիկ իշխանությունները՝ երկրում արդարադատություն իրականացնելու նպատակով: Սույն իրավական հուշարձանը դարեր շարունակ ազգային ինքնության պահպանման ու պետականաշինության անկյունաքար է եղել (Միրզոյան 79):

Դատաստանագրքի համար սկզբնաղբյուր են ծառայել Մովսիսական օրենքները, հայոց կանոնական և սովորույթային իրավունքը:

Գրքի տերմինաբանական արժեքը ներկայացնելիս հիմք ենք ընդունել ձեռագրերի Ա խմբագրությունը: Այն ընդգրկում է Չմմառի հնագույն օրինակը, որը կամ Մխիթար Գոշի շարադրած բնօրինակն է, կամ սրանից կատարված մեկ ընդօրինակություն, որոնցից մեկն էլ հեղինակը ուղարկել է Գրիգոր Տղա կաթողիկոսին: Այս մասին վկայում է Մխիթար Գոշի նամակը՝ ուղղված Ամենայն Հայոց կաթողիկոսին (Թորոսյան 44-45): Ա խմբագրությունը ներառում է Նան Վենետիկի № 1237 և № 1738 ձեռագրերը:

Սմբատ Սպարապետի նույնանուն աշխատությունն արտացոլում է Կիլիկյան Հայաստանի հասարակական-քաղաքական կառուցվածքն ու իրավակարգը: Սմբատ Սպարապետի համար իրավական ուղղորդիչ աղբյուրներ են ծառայել հայոց սովորույթային և թագավորական իրավունքը, «Կանոնագիրքը Հայոց»-ը և, ենթադրվում է, նաև Մխիթար Գոշի դատաստանագիրքը: Այս պատճառով էլ շատ իրավական նորմեր, հասկացություններ, բառեր և կապակցություններ երկու աշխատություններում էլ նույնն են կամ նման (Վաղարշյան 9): Միաժամանակ հավելենք, որ դատաստանագրքերում գործածված իրավական ոլորտին վերաբերող բառերն ու կապակցությունները, որոնք հեղինակների կողմից ստացել են իրենց սահմանումները, որակում ենք որպես մասնագիտական տերմիններ՝ չնայած այն հանգամանքին, որ դրանց մեծ մասը կենսունակ չէ ներկայիս իրավատերմինահամակարգում:

Դատաստանագրքերն ընդգրկում են հայ իրավունքի սկզբնաղբյուրների ամբողջական կյուրը, որը Սմբատ Սպարապետը խմբավորում է՝ ըստ **ա) պետական իրավունքի, բ) եկեղեցական իրավունքի և գ) քաղաքացիական իրավունքի** հաջորդականության: Մխիթար Գոշն այն ներկայացնում է առանց թեմատիկ բաժանումների:

Իրավաբանական տերմինահամակարգը միջնադարյան օրենսգետների երկերում տարաբնույթ է:

Մխիթար Գոշը, ապրելով և ստեղծագործելով Սմբատ Սպարապետից ավելի վաղ, հասարակական, պետական գործիչ, մանկավարժ, իրավագետ, գրող լինելուց զատ, եղել է նաև վարդապետ. ստեղծագործելիս հիմնականում տուրք չի տվել միջինհայերենյան բարբառային լեզվատարրերին՝ մասնավորապես հավատարիմ մնալով հոգևորականների համար մշտնջենական սրբազան լեզու գրաբարի լեզվական պահանջներին:

Սմբատ Սպարապետի աշխատության լեզուն միջին հայերենն է՝ համեմված խոսակցական և բարբառային լեզվամիավորներով, որոնք պայմանավորված են իր ապրած ժամանակահատվածով, երբ միջին հայերենը լիակատար ամրապնդել էր իր դիրքերը: Բացի այդ, Սպարապետը, լինելով հասարակական գործիչ, առավելապես հաղորդակցվել է միջին հայերենով:

Սույնով պայմանավորված՝ կարող ենք փաստել, որ Մխիթար Գոշի իրավագիտական խոսքը շարադրված է մասնավորապես գրաբարյան, իսկ Սմբատ Սպարապետի խոսքը՝ միջինհայերենյան բառապաշարով:

Հեղինակի անուն-ազգանունը նշվում է այն տերմինների կողքին, որոնք գործածվել են միայն տվյալ հեղինակի խոսքում, ինչպես՝ **հրիտակ (ՄԳ), վզեան (ՍՍ):**

Յոդվածում բերված բնագրային օրինակներին կից անհրաժեշտության դեպքում տրվում են արևելահայերեն փոխադրումները:

Վերլուծություն և արդյունքներ

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի աշխատություններում քաղաքացիական հարաբերություններ կարգավորող օրենքներն ու կանոնները ձևակերպված են տվյալ ժամանակի հայ իրավական միտքն արտահայտող բառերով ու արտահայտություններով, որոնց մի զգալի մասն այսօրվա մասնագիտական բառապաշարի հիմնական բաղադրիչներ են, մի զգալի մասն էլ՝ ներկայիս տերմինների նախադրյալներ: Քիչ չեն պատմաբանի և հնաբանի արժեք ստացած բառերն ու կապակցությունները: Դատաստանագրքերում հայ իրավական խոսքը ձևակերպող լեզվամիավորներն անվանում են հետևյալ կետերին վերաբերող հասկացություններ և գործողություններ՝

- ա) ամուսնաընտանեկան կյանք,
- բ) ժառանգություն,
- գ) մասամբ՝ սեփականություն,
- ե) պայմանագրային պարտավորություններ:

Մեր ուսումնասիրության կյուրն է ամուսնաընտանեկան և ժառանգական քաղաքացիական հարաբերություններ կարգավորող օրենքների մասնագիտական բառապաշարը:

Դատաստանագրքերում ամուսնաընտանեկան հարաբերություններ կարգավորող օրենքներին վերագրվող տերմինների ձևափմաստային քննություն

Ամուսնաընտանեկան կյանքը հայ իրավական դաշտում միշտ էլ էական նշանակություն է ունեցել: Կյանքի այս ոլորտին առնչվող օրենքներն ու կանոնները, որոնք սկզբնապես շարադրվել են ազգային սովորույթների հիման վրա, ստեղծվել են

դեռևս վաղ ժամանակներում և, Մխիթար Գոշի ու Սմբատ Սպարապետի դատաստանագրքերից զատ, ընդգրկված են նաև Շահապիվանի կանոններում, Գրիգոր Լուսավորչին, Աշտիշատի ժողովին վերագրվող, Հովհան Իմաստասեր Օձնեցու, Դավիթ Ալավկատրոդու աշխատություններում և իրավական այլ աղբյուրներում:

Դատաստանագրքերում շարադրված ամուսնաընտանեկան հարաբերություններ կարգավորող օրենքներում գործածված են.

1) **ամուսնություն, ամուսնական գույք անվանող տերմիններ**, ինչպես՝ *առեանգ, ինչք (ՄԳ), պոռյգ (ՍՍ), տուլայր (ՍՍ), մահր (ՍՍ), օժիտ, վարձանք (ՄԳ)*,

2) **ամուսնալուծություն նշանակող տերմիններ**, ինչպես՝ *ամուսնալուծութիւն (ՄԳ), ապահարզան (ՄԳ), գիր ապահարզանի (ՄԳ), ազատութեան թուղթ (ՍՍ), ազտել (ՍՍ), արծագել (ՍՍ), ապահարզել (ՍՍ), բաժնվել (ՍՍ), ի փրթման թողուլ (ՍՍ), թողած (ՍՍ), անձին գին (ՍՍ)*:

1) Հեթանոսական Հայաստանում ամուսնությունը կատարվում էր **առեանգման** կամ **գնման** միջոցով: Աղջիկ առեանգելն ու նրա հետ ամուսնանալը հայի համար պարծանքի պես մի բան էր¹: Ազգային այս սովորույթը, սակայն, անընդունելի և օրենքով անթույլատրելի դարձավ քրիստոնեական Հայաստանում: Համաձայն Մխիթար Գոշի սահմանած «Յաղագս դատաստանաց **առեանգաց**» օրենքի՝ առեանգողն իր արարքի դիմաց անպայման պիտի հատուցեր աղջկա ծնողներին (Գոշ 55):

Կանանց գնման դեպքում փեսացուն **տուլայր** էր տալիս հարսնացուի համար, իսկ վերջինս ամուսնու տուն էր բերում իր գույքը՝ **պոռյգը**² որպես օժիտ: Ամուսնանալիս օժիտի սովորույթը կնոջ համար ինքնուրույն գույքային դրություն էր ապահովում: Այն ավելի էր ամրապնդվում, երբ ամուսնուց ստանում էր ամուսնական ընծա, որը ևս անվանում էին **տուլայր**:

Տուլայր և **պոռյգ** փոխառությունները Սմբատ Սպարապետի դատաստանագրքում փոխարինել են Գոշի գործածած **վարձանք** և **օժիտ** տերմիններին (Սուքիասյան 294-295): **Տուլայր** տերմինի ծագումը Հրաչյա Աճառյանը կապում է ֆրանսերեն *douaire* բառի հետ, որը նշանակում է «այրիկության ժամանակ ապրուելու համար ամուսնու տուած ինչքը իր կնոջ», այնուհետև ավելացնում, որ վերջինիս նախահիմքը եղել է լատիներեն «dos, dotis «նուէր, օժիտ» բառերը: Հայերենում **տուլայր** տերմինը նշանակում է «վարձանք, փեսի տուած օժիտը հարսին» (Աճառյան 423-424):

Սմբատ Սպարապետն այս տերմինին զուգահեռ նույն նշանակությամբ գործածում է արաբերենից փոխառված **մահր** բառը, որը բառարանում բացատրվում է «զտուլայրն, որ է մահր» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի» 198): Մեջբերենք.

«...Եւ թէ հետ տարոյն չգտնվի, ու տղայ չկենայ՝ նա դառնայ **պոռյքն**, նոյնպես եւ **տուլայրն**՝ թէ այրիկն լինի տուել. ապա թէ տղայ կենայ՝ նա պոռյքն տղային է, չդառնայ, նոյնպես եւ **մահրն** հետ կնկան մահուն տղայինն է...» (Սպարապետ 86):

«Եթե յոթ տարուց հետո նա (կինը) չգտնվի և նրանից երեխա մնացած չլինի, այդ դեպքում եթե օժիտը և ամուսնական նվերը ամուսինը տված լինի, պետք է վերադարձվեն, իսկ եթե երեխա մնացած լինի, այդ դեպքում պոռյգը երեխային է պատկանում և չպետք է վերադարձվի: Կնոջ մահից հետո ամուսնական նվերը նույնպես պետք է երեխային տրվի» (Ավագյան 603):

Հունարենից փոխառված **պոռյգ** տերմինը, որ նշանակում է «Օժիտ. պաշտատական. վարձանք. ինչք՝ զոր հարսն բերե ի տանէ ծնողաց իւրոց ի տուն

¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Խ. Սամուելյան**, Հայ սովորութեան իրաւունքը: Հին հայոց իրաւունքը եւ նրա հետազօտութեան մեթօդը: Առեանգմամբ և գնմամբ ամուսնութիւն, Թիֆլիս, Պետտայոյց, 1911:

փետային» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի» 661), չենք հանդիպի Մխիթար Գոշի դատաստանագրքում: Այս տերմինի փոխարեն հեղինակը գործածում է **ինչք** բառը, ինչպես՝

«Եւ թէ դատաստան լիցի բաժանմանն, **զամենայն զկնոջն զինչսն զբերեալն ի տուն առն** (այն ամենը, որ կինն իր հետ ամուսնու տուն է բերե) տացէ ի ձեռն կնոջն եւ արծակիցէ լինել առն այլում» (Գոշ 37):

Այսօրվա ամուսնաընտանեկան իրավանորմերում **ինչք, տուայր, մահր, պռույգ, օժիտ, վարձանք** տերմինները չեն գործածվում իրենց անվանած երևույթների չինելու կամ առկա երևույթների՝ իրավական նորմերով չկարգավորվելու պատճառով:

2) Երկրորդ խմբի իրավաբանական տերմինները վերաբերում են ամուսնական բաժանումներին և դրանց թույլատրելի (մենամուսնություն, ամուսնական չափահասություն, ամուսինների կամավոր համաձայնություն և այլն) և ոչ թույլատրելի (կնոջ անհնազանդություն, փոխադարձ ատելություն, ամուսնական անհավատարմություն և այլն) կողմերին:

Միջնադարում այր և կին ամուսնալուծվում էին, եթե կային լուրջ պատճառներ (ամուսնական դավաճանություն, արվագիտություն): Ամուսնական զույգերի բաժանումը վկայում էր ապահարզանի գրությունը, որը Մխիթար Գոշը անվանում է **գիր ապահարզանի** (Գոշ 84), իսկ Սմբատ Սպարապետը՝ **ազատութեան թուղթ** բառակապակցություններով: Մեջբերենք.

«Եւ առնու **ազատութեան թուղթ**, և այնով ամուսնանալ կարէ» (Սպարապետ 101):

Այժմյան օրենսդրության մեջ **ապահարզանի գրություն** նշանակող տերմինները փոխարինվել են **ամուսնալուծության վկայական** արտահայտությամբ:

Դատաստանագրքերում **ամուսնալուծություն, ամուսնական կապը լուծել(ը)՝ վերացնել(ը)** նշանակությունն արտահայտվում է **անվանական (ապահարզան, ամուսնալուծութիւն) և բայական (ազտել, արծագել, ապահարզել, բաժնվել, ի փրթման թողուլ)** տերմիններով: **Թողած** բառը գործածվում է **ամուսնալուծված** նշանակությամբ: Վերոնշված բառերը կազմում են հոմանիշային շարքեր, որոնք որոշակի քանակով առկա են Սմբատ Սպարապետի դատաստանագրքում: Օրինակ՝

«Ես կու **ապահարզեմ** ի յայս անուն կնկնես» (Սպարապետ 98):

«Այս փնթոյս անսգամիս **արծագելն** վասն այնոր է սահմանած արձանագրով» (Սպարապետ 99):

Ատելության պատճառով ամուսնալուծվելու դեպքում, եթե դրանում մեղավոր է ամուսինը, կնոջը պետք է վերադարձնի ոչ միայն պռույգն ու տուայրը, այլև նրան տուգանք վճարի պռույգի երրորդ մասի չափով որպես նրա **անձին գին (ՍՍ)** կամ **վարձանք (ՄԳ)**, եթե ամուսնանալիս կինը անարատ է եղել:

Վարձանք և անձին գին տերմիններն անվանում են միևնույն երևույթը՝ նշանակելով «2. Դրամ, որ տալիս են աղջկայ հորը՝ աղջկան կին առնելու համար. գրաւական» (Ղազարյան, Գրաբարի բառարան [հ. 2] 508): Մեջբերենք.

«Իսկ եթէ խաբիցէ ոք զկոյս խաւսեցեալ եւ ննջիցէ ընդ նմա, **վարձանաւք** վարձեսցէ գնա իւր կնութեան» (Գոշ 64):

Վարձանք բառը, լինելով բազմիմաստ, իր առաջին նշանակությամբ՝ «1. Նուէր, որ փեսան կամ փեսայի ընտանիքը տալիս է հարսին», հոմանիշ է **տուայր** տերմինին:

Այսպիսով՝ ամուսնաընտանեկան հարաբերություններ կարգավորող օրենքները, առավել ուշադրության արժանանալով միջնադարյան օրենսգետների կողմից, շարադրված են ժամանակի իրավագիտակցությունն արտահայտող բառերով ու կապակցություններով, հեղինակներից յուրաքանչյուրին բնորոշ լեզվական առանձնահատկություններով:

Դատաստանագրքերում ժառանգական իրավունքին վերագրվող տերմինների ձևախմբատային քննություն

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի աշխատություններում շարադրված են ժառանգական իրավունքի բավականաչափ կանոնակարգված օրենքներ՝ արտահայտված համապատասխան իրավաբանական տերմիններով, որոնք անվանում են *ժառանգական իրավունք, ժառանգության փոխանցում, ժառանգվող գույք, գույքը տնօրինող, կտակը վավերացնող անձինք*, ինչպես նաև *ժառանգությանը վերաբերող գործողություններ*, օրինակ՝ *անդրանկություն (ՄԳ), ժառանգություն, ժառանգատրություն, հայրենիք (ՄԳ), հրիտակ (ՄԳ), անժառանգություն (ՄԳ), կտակ, դիաթեկ կամ տիաթիկ (ՍՍ), հայրենատրություն (ՍՍ), ժառանգ, ժառանգակից (ՄԳ), ժառանգապահ (ՄԳ), ժառանգաւոր (ՄԳ), ժառանգորդ (ՄԳ), նոմիկոս (ՍՍ), ժառանգեցուցանել (ՄԳ), ժառանգել, ժառանգ առնել (ՄԳ), դիաթեկ այնել (ՍՍ)*:

Գոշի և Սպարապետի աշխատություններում քննարկված իրավական կարևոր հարցերից է ժառանգության փոխանցման **անդրանկութեան սկզբունքը**, ըստ որի՝ հայրական ունեցվածքի մեծագույն մասն անցնում է անդրանիկ որդուն: Խոսքը վերաբերում է գահակալների ժառանգության փոխանցմանը: Մեջբերենք.

«...տալ զառաջին ծնունդն, առաւել տալ ի ժառանգութեանց. ...զի նա է սկիզբն որդւոց նորա, եւ նմա անկ է **անդրանկութիւնն**» (Գոշ 80):

Հեղինակներից յուրաքանչյուրի՝ նույն երևույթները տարբեր կերպ անվանելու հետևանքով հաճախ ստեղծվում են հոմանիշ բառերի շարքեր: Քննարկենք դրանցից մի քանիսը:

1. *Հայրենիք (ՄԳ) – հայրենատրություն (ՍՍ) – «Հայրենի՝ հայրական կալվածք՝ սեփականություն»* (Ղազարյան, Միջին հայերենի բառարան 404):

«Իսկ եթէ առն լեալ դուստրն (պսակված աղջիկը) կամիցի իւրովք ծննդաւք եւ արամբ գալ եւ **զհայրենիսն** ժառանգել...» (Գոշ 73):

Սմբատ Սպարապետի դատաստանագրքում **հայրենատրություն** տերմինին զուգահեռ գործածվում են *հայրենտրություն, հայրենիստան, հայրենետրություն* բառային տարբերակները (Սպարապետ 24, 110): Ինչպես՝

«Ապա տունն և **հայրենիստան** եկեղեցոյն է» (Սպարապետ 49):

Հայրենիք բառը գրաբարյան կազմություն է հետևյալ նշանակություններով՝ 1. *հայրական կալվածք, ունեցվածք, ժառանգություն*, 2. *նախնիների աշխարհ, երկիր*: Արդի հայերենում, պայմանավորված հասկացության ծավալի փոքրացմամբ, կատարվել է բառիմաստի նեղացում, ուստի **հայրենիք** բառի 1-ին բացատրությունն այսօր հնացած է, կիրառելի չէ:

2. *Կտակ - դիաթեկ կամ տիաթիկ (ՍՍ) - «Օրինական փաստաթուղթ, որով մեկը, նախքան վախճանուելը, տնօրինում է իր գործերը կամ արձանագրում է պատուէրներ և խրատներ»* (Ղազարյան, Գրաբարի բառարան [հ. 1] 676),

«Այժմ ի **տիաթիկ** բանն սկիզբն առնեմք» (Սպարապետ 129):

Իրանական աղբյուրներից փոխառված **կտակ** բառը գործածվել է դեռևս գրաբարյան ժամանակաշրջանում: Իսկ **դիաթեկ** կամ **տիաթիկ** տերմինը միջինհայերենյան հունական փոխառություն է, որը հանդիպում ենք միայն Սմբատ Սպարապետի աշխատության մեջ:

3. *Ժառանգ – ժառանգաւոր (ՄԳ) – ժառանգորդ (ՄԳ) – «ժառանգություն ստացած կամ ստանալու իրաւունքն ունեցող անձ»* (Ղազարյան, Գրաբարի բառարան [հ. 1] 502),

«Ապա թէ բաժնած լինի, եւ կնկանն ճանչած ի յետ՝ նա իր **ժառանգաւոր** յետմնացացն (հետնորդ) լինի, զոր դնէ» (Սպարապետ 130):

Ժառանգակից (ՄԳ) տերմինը հոմանիշ է վերոնշյալ բառերին: Նրանց միջև իմաստային տարբերությունն այն է, որ ժառանգություն ստացող մեկ անձը կոչվում

Ե **Ժառանգ**, իսկ ստացողները, եթե երկուսն են և ավելին՝ **Ժառանգակից**, որը լայն իմաստով նշանակում է *Ժառանգությունն ստանալու հավակնորդ*: Մեջբերենք.

«Այլ ճշմարտությամբ ի հաւրե առեալ ժառանգութիւնն ոչ է իրաւացի զկնի մահու հաւրն զղջմամբ փոխել ընդ այլ **Ժառանգակցաց**» (Գոշ 78):

Ժառանգաւոր բառից է կազմված **Ժառանգաւորութիւն** տերմինը, որը նշանակում է *Ժառանգավոր լինելը*: Այն չպետք է շփոթել բազմիմաստ **Ժառանգութիւն** բառի հետ, որը դատաստանագրքերում արտահայտում է «3. Ժառանգուած նիւթական հարստութիւն՝ ունեցուածք» (Ղազարյան, Գրաբարի բառարան [h. 1] 503) իմաստը:

4. *Յրիտակ – ժառանգութիւն. հրիտակ* բառը միջինհայերեայնյան լեզվամիավոր է, հանդիպում է Մխիթար Գոշի դատաստանագրքում՝ «Կտակով որպէս ժառանգությունն թողնված գույք՝ ունեցվածք, կտակված ժառանգություն» նշանակությամբ: Իմաստով մոտ է **Ժառանգութիւն** տերմինին վերջինիս վերոնշված իմաստով:

«Բայց զշարժուն ինչ և **զհրիտակ**, որում իշխան է, թե օտարի տայ» (Գոշ 119):

Թեպետ այսօր չգործող, բայց հնուց եկած սովորույթ է այն, որ հայրական ժառանգությունը պահող ժառանգները որդիներն են և ոչ դուստրերը, ուստի այսպիսի ժառանգորդներին Մխիթար Գոշն անվանում է **Ժառանգապահ** տերմինով, իսկ ժառանգատուի զավակ, ժառանգ չունենալու երևույթը՝ **անժառանգութիւն**:

«...թեպետ բաժանորդք ընդ եղբարս **Ժառանգութեան** քորք են, այլ ոչ **Ժառանգապահք**, յորժամ եղբարք իցեն» (Գոշ 74):

Ուշագրավ օրինակ է **Նոմիկոս (Նոտար)** տերմինը, որը գործածում է միայն Սմբատ Սպարապետն իր դատաստանագրքում, երբ խոսում է կտակի վավերացման մասին: Մեջբերենք՝

«Եթե ոք ուզէ, որ գիտենայ զհաստատուն կտակն՝ նա այս է, որ մինչդեռ հիւանդն աղէկ ուննայ զիր խելքն՝ նա կոչէ զիր ծանաւթիքն եւ **զնոմիկոսն**, եւ թէ ի գեղ լինայ՝ նայ զգեղջին երեցն, եւ երեք վկայով գրել տայ զիր զիրքն» (Սպարապետ 130):

Իրավաբանական տերմինի փոխառություն է հունարենի միջնորդությամբ լատիներենից փոխառված **Նոտար (notarius)** բառը՝ *քարտուղար, գրագիր* նշանակությամբ (Ղարսյան 16, 71): Ժամանակի ընթացքում տեղի է ունենում իմաստային զարգացում, և արդեն միջնադարում բառը նոր նշանակություն է ձեռք բերում՝ պահպանելով այն մինչև մեր օրերը՝ «Պաշտօնեայ, որի պարտաւորութիւնն է վաճառման, գրաւի, կտակի և նման իրաւաբանական ակտեր կատարել, իւր մատենակի մէջ մուծել և նրանցից ընթօրինակութիւններ տալ, վաւերացնել ակտերը, ստորագրութիւններ, աւանդի դրված փաստաթղթերը պահել ևն» (Մայխասեանց 498):

Ժառանգեցուցանել (ՄԳ) և Ժառանգեցնել (ՍՍ) տերմիններն արտահայտում են միևնույն իմաստը՝ *Ժառանգորդ դարձնել*: Նրանց միջև եղած տարբերությունը միջին հայերենում կատարված պատմական հնչյունափոխությունն է, որի հետևանքով բառամիջում սղվում է պատճառական **-ուցան** ածանցը: Մեջբերենք.

«Չկարե ոք ծառայն **Ժառանգեցնել**» (Սպարապետ 110):

Կտակի կազմության ժամանակ կտակարարն իրավունք ունի իր ունեցվածքի համար սեփական նախընտրությամբ ժառանգ կարգել, ինչն էլ արտահայտվում է **Ժառանգ առնել** տերմինով: Մեջբերենք.

«Այլ որդի դստեր ո՛չ ժառանգէ եւ ո՛չ առցէ մասն, բայց եթե մինչ կենդանի իցէ (խոսքը կտակարարի մասին է)՝ գրով **Ժառանգ առնիցէ**» (Գոշ 75):

Կտակել իմաստով է գործածվում **դիաթէկ այնել** տերմինը (Սպարապետ 109), որը գործածական է միայն Սմբատ Սպարապետի դատաստանագրքում:

Դատաստանագրքերում քաղաքացիական իրավունքի այս ենթաճյուղի մասնագիտական բառապաշարը թե՛ իրավական հայացքների, թե՛ հասկացությունների, թե՛ իմաստային դաշտի տեսանկյունից ներկայիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Ժառանգական իրավունք» բաժնում տեղ գտած

տերմինահամակարգի համեմատությամբ ընդգկում է՝ ա. ընդհանրական տերմիններ՝ *ժառանգ, ժառանգություն, անժառանգ, կտակ*, բ. հոմանիշ տերմիններ, որոնց 2-րդ բաղադրիչն այսօր կենսունակ տերմին է՝ *նոսիկոս – նոտար, դիաթէկ – տիաթիկ – կտակ*, գ. հոմանիշային շարքեր կազմող, բայց ներկայիս գրական լեզվում հնաբառի կամ պատմաբառի արժեք ստացած լեզվատարրեր՝ *հայրենատրություն – հայրենիստան – հայրենետրություն, ժառանգաւոր – ժառանգակից – ժառանգապահ*:

Հավելենք, որ այսօրվա ժառանգական հարցերը կարգավորող իրավաբանական տերմինները, ի տարբերություն միջնադարյան օրենսգրքերի բառապաշարի, մեծ մասամբ բառակապակցություններ են, ինչպես՝ *ժառանգության զանգված, անարժան ժառանգ, փակ կտակ, կտակային հանձնարարություն* և այլն:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությամբ հանգում ենք այն հետևության, որ միջնադարում հայ իրականության մեջ ձևավորվել են օրենքներով և կանոններով կարգավորվող ամուսնաընտանեկան և ժառանգական քաղաքացիական հարաբերություններ, որոնց վերաբերյալ իրավանորմերը դատաստանագրքերում շարադրված են մասնագիտական համապատասխան բառապաշարով: Դրանց մի սովոր մասը թեև այսօր տերմինային արժեք չունի, բայց և այնպես մի զգալի մասն էլ կարևոր դերակատարությունն է ունեցել արդի հայերենի իրավական բառապաշարի բառամիջուկը կազմելիս:

Դատաստանագրքերի՝ կյանքի նշված ոլորտների մասնագիտական բառակազմը համեմատելով ՀՀ ներկայիս օրենսդրության՝ համապատասխան իրավանորմերի մասնագիտական բառակազմի հետ՝ տարբերակում ենք՝

1. ՀՀ ներկայիս օրենսդրությունում գործածվող հին և միջնադարյան վաղեմություն ունեցող տերմիններ՝ *նույն ձևաբովանդակային դրսևորումներով, ինչպես՝ կտակ, ժառանգ, ապահարզան, ամուսնալուծություն, օրենք*,

2. արդի հայերենի իրավաբանական տերմինների համար որոշակի նախադրյալներ դարձած լեզվամիավորներ, որոնք այսօր գնահատվում են որպես հնաբառեր, ինչպես՝ *գիր ապահարզանի, ազատության թուղթ – ամուսնալուծության վկայական, ապահարզել, ի փրթման թողուլ – ամուսնալուծվել, ինչք – գույք, ունեցվածք: Ժառանգապահ – ժառանգակից – ժառանգաւոր* բառերի իմաստային դաշտն այսօր արտահայտում է *ժառանգ* տերմինը՝ ընդլայնելով անվանող հասկացության ծավալը:

3. միջնադարում մասնագիտական բառի արժեք ստացած, բայց այսօր պատմաբառ դարձած լեզվամիավորներ, ինչպես՝ *տոււայր, մահր, անձին գին, վարձանք, հայրենատրություն, անդրանկություն: Հայրենիք* բառը *հայրենական կալվածք, ժառանգություն* իմաստով ևս պատմաբառ է:

Միջնադարում սույն ոլորտներին վերագրվող շատ հասկացությունների մեկից ավելի անվանումները թույլ են տալիս ենթադրել, որ մասնագիտական բառապաշարի որոնման ճանապարհին իրավական խոսքը դեռևս ձևավորման գործընթացում էր:

Ակներև են գրական հայերենի 2 դրակների ընդհանրական և տարբերակիչ մասնագիտական բառաշերտերը, որոնք պայմանավորված են օրենսգետների օգտագործած իրավական աղբյուրներով, նրանց կրթությամբ, հասարակական և հոգևոր կյանքում զբաղեցրած պաշտոնով, աստիճանով, տարբեր ժամանակահատվածներում ստեղծագործելու լեզվական, հասարակական-քաղաքական տարաբնույթ պահանջներով: Այս առումով դատաստանագրքերի ուսումնասիրված տերմինակազմն ընդգրկում է՝

1. **ընդհանուր տերմիններ**, որոնք գործածվել են գրական հայերենի բոլոր դրակներում, ինչպես՝ *ժառանգություն, ապահարզան կտակ*,

2. **գրաբարյան տերմիններ**, որոնք հատուկ են միայն գրաբարին, միջին հայերենում գրեթե բոլորը ստացել են նոր անվանումներ, ինչպես՝ *վարձանք, անդրանկություն, հայրենիք, գիր ապահարզանի*,
3. **միջինհայերենյան տերմիններ**, որոնք բնորոշ են միայն գրական հայերենի 2-րդ որակին, ինչպես՝ *անձին գին, հրիտակ, դիարթել կամ տիարթիկ*:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան, Հրաչյա. *Հայերեն արմատական բառարան*. հատոր 4, Երևան, 1979:
2. Ավագյան, Ռուբեն. *Հայ իրավական մտքի զանձարան*. հատոր 1, ՄՆԻԻ-ԵՄ - XXI դար, Երևան, 2001:
3. Գոշ, Մխիթար. *Գիրք դատաստանի*. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975:
4. Թորոսյան, Խոսրով. «Մխիթար Գոշի Ղատաստանագրքի գործադրության մասին միջնադարյան Հայաստանում». *Պատմա-բանասիրական հանդես*, № 4, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1971:
5. Ղազարյան, Ռուբեն. *Գրաբարի բառարան*, հատոր 1-2, Երևանի համալս. հրատ., Երևան, 2000:
6. ---. *Միջին հայերենի բառարան*. ԵՊՀ հրատ., Երևան, 2009:
7. Ղարսյան, Աննա. *Արդի հայերենի իրավաբանական տերմինները*. հեղ. հրատ., Երևան, 2022:
8. Մալխասեանց, Ստեփան. *Հայերեն բացատրական բառարան*. հատոր 3, Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երևան, 1944:
9. Միրզոյան, Նարինե. «Պատերազմի և գերության թեմատիկան Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» երկում». *Գիտական Արցախ*, 4(11), «Արցախ» հրատ., Երևան, 2021:
10. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*. հատոր 2, Երևանի համալս. հրատ., Երևան, 1981:
11. Սպարապետ, Սմբատ. *Ղատաստանագիրք*. Հայպետհրատ, Երևան, 1958:
12. Վաղարշյան, Արթուր. «Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի դատաստանագրքերի նմանության հարցի իրավագիտական վերլուծություն». *Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն*, 2 (26), ԵՊՀ հրատ., Երևան, 2018:

WORKS CITED

1. Atwar'yan, Hrachya. Hayeren armatakan bar'aran. hator 4, Erevan, [Armenian Etymological Dictionary, Yerevan] 1979. (in Armenian)
2. Avagyan, R'uben. Hay iravakan mtqi gand'aran. hator 1, MNII-EM - XXI dar, Erevan, [Treasury of Armenian Legal Thought, Yerevan] 2001. (in Armenian)
3. Gosh, Mxit'ar. Girq datastani. HSSH GA hrat., Erevan, [Book of Judgment, Yerevan] 1975. (in Armenian)
4. T'orosyan, Xosrov. Mxit'ar Goshi Datastanagrqi gorc'adrut'yan masin mijnadaryan Hayastanum. Patma-banasirakan handes, № 4, HH GAA «Gitut'yun» hrat., Erevan, [On the implementation of Mkhitar Ghosh's Book of Judgment in Medieval Armenia, Yerevan] 1971. (in Armenian)
5. Ghazaryan, R'uben. Grabari bar'aran, hator 1-2, Erevani hamals. hrat., Erevan, [Classical Armenian (Grabar) Dictionary, Yerevan] 2000. (in Armenian)
6. ---. Mijin hayereni bar'aran. EPH hrat., Erevan, [Dictionary of Middle Armenian, Yerevan] 2009. (in Armenian)
7. Gharslyan, Anna. Ardi hayereni iravabanakan terminnery'. hegh. hrat., Erevan, [Legal Terms of Modern Armenian, Yerevan] 2022. (in Armenian)

8. Malxaseanc, Step'an. Hayere'n bacatrakan bar'aran. hator 3, Haykakan SSR' petakan hrat., Erevan, [Explanatory Dictionary of Armenian, Yerevan] 1944. (in Armenian)
9. Mirzoyan, Narine. Paterazmi ev gerut'yan t'ematikan Mxit'ar Goshi «Girq datastani» erkum. «Gitakan Arcax», 4(11), «Arcax» hrat., Erevan, [War and Captivity Themes in the «Lawcode» by Mkhitar Gosh, Yerevan] 2021. (in Armenian)
10. «Nor bar'girq haykazean lezui». hator 2, Erevani hamals. hrat., Erevan, [The New Dictionary of Haygazian Language, Yerevan] 1981. (in Armenian)
11. Sparapet, Smbat. Datastanagirq. Haypethrat, Erevan, [Judgment book, Yerevan] 1958. (in Armenian)
12. Vagharshyan, Art'ur. Smbat Sparapeti ev Mxit'ar Goshi datastanagrqeri nmanut'yan harci iravagitakan verluc'ut'yun. «Banber Erevani hamalsarani. Iravagitut'yun», 2 (26), EPH hrat., Erevan, [Legal-Scientific Research on the Similarities of M. Gosh's and S. Goundstable's Codexes, Yerevan] 2018. (in Armenian)

FORMAL-SEMANTIC ANALYSIS OF THE LEGAL LEXICON OF LAWS AND RULES GOVERNING MATRIMONIAL-FAMILY AND HEREDITARY-CIVIL RELATIONS IN THE JUDICIAL CODES OF MKHITAR GOSH AND SMBAT SPARAPET

ANNA GHARSLYAN

*State Economic University of Armenia
Chair of Languages, Associate Professor, Ph.D. in Philology,
Yerevan, the Republic of Armenia*

The aim of the article is to present the formal and semantic peculiarities of the legal lexicon of the laws and rules regulating marital-family and hereditary-civil relations in the judicial codes of two brilliant medieval jurists - Mkhitar Gosh and Smbat Sparapet, the knowledge of which ensures a clear and accurate presentation of legal speech in the modern Armenian language in terms of content and language.

In order to achieve the goal, we have set the following tasks: to subject the judicial codes of medieval jurists to linguistic examination, to identify formal manifestations of the lexicon of the studied material, to present their development, to compare them with the professional lexicon of the corresponding codes, to identify archaisms, historical terms, as well as viable legal terms of the modern Armenian language.

The material of the article is presented by semantic, comparative, analytical and descriptive methods, asymmetric and synchronic approaches developed in linguistics.

Based on the conducted research we conclude that in the Middle Ages marital-family and hereditary civil relations were formed in the Armenian reality, regulated by laws and rules, the legal norms in relation to which are set forth in the judicial codes with the corresponding professional vocabulary. Although a significant part of them has no terminological meaning today, a considerable part of them played an important role in the formation of the vocabulary of the legal lexicon of the modern Armenian language.

The common and distinctive professional word layers of the two qualities of the literary Armenian language are evident, which are conditioned by the legal sources used by the legislators, their education, the position occupied in public life, different linguistic, socio-political requirements for creation in different periods.

Keywords: *term, matrimonial relations, inheritance law, judicial code, national customs, Grabar, Middle Armenian, synonymy series, divorce, will.*

ФОРМАЛЬНО-СЕМАНТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ ЗАКОНОВ И ПРАВИЛ, РЕГУЛИРУЮЩИХ СУПРУЖЕСКИЕ И НАСЛЕДСТВЕННЫЕ ГРАЖДАНСКИЕ ОТНОШЕНИЯ В СУДЕБНИКАХ МХИТАРА ГОША И СМБАТА СПАРАПЕТА

АННА ГАРСЛЯН

доцент кафедры языков

Армянского государственного экономического университета,

кандидат филологических наук,

г. Ереван, Республика Армения

Цель статьи — представить формально-семантические особенности юридической лексики законов и правил, регулирующих супружеские и наследственные гражданские отношения в Судебниках двух блестящих средневековых юристов Мхитара Гоша и Смбата Спарапета, знание которых обеспечивает четкое и точное изложение речи юридического характера на современном армянском языке с точки зрения их содержания и лексики.

Для достижения цели мы поставили перед собой следующие задачи: подвергнуть лингвистическому анализу взгляды средневековых юристов, подчеркнуть смысловые проявления лексики изучаемого материала, представить парадигму их развития, сравнить с профессиональным лексиконом соответствующих современных действующих кодексов, определить в них архаизмы и историзмы, а также актуальные и на сегодняшний день в современном армянском языке юридические термины.

Материал представлен на основе исследования, проведенного с помощью семантического, сопоставительного, аналитического и описательного методов, а также кросстемпорального и синхронного лингвистических подходов.

На основе проведенного исследования мы делаем вывод о том, что в армянской действительности в средние века сформировались супружеские и наследственные гражданские отношения, регулируемые законами и правилами, правовые нормы которых описаны в судебниках с применением профессиональной лексики. Хотя большая часть таких лексических единиц сегодня не имеет терминологического значения, тем не менее, их значительная часть сыграла важную роль в формировании юридической лексики современного армянского языка.

Можно отметить, что налицо смешение двух слоев литературного армянского языка: общеупотребительных и профессиональных слов, что обусловлено характером используемых правовых источников, образованием и общественным положением авторов судебников и различными языковыми нормами и общественно-политическими условиями в определенные исторические периоды.

Ключевые слова: *термин, супружеские отношения, наследственное право, судебник, национальные обычаи, грабар, среднеармянский, синонимический ряд, расторжение брака, завещание.*